

**ԷՎԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՏՍԱԹՈՒՂԹ**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**




**Բազ Բաժնետիրական Ընկերություն**

**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am  
 Հաշվետվություն թիվ 3, 20.11.08թ.**


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս, պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	804,300 հատ, 40,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ, 10,000 ՀՀ դրամ

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝


<u>Գայանե Սարգսյան</u> (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահի Ժ/պ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>20.11.08թ.</u> (ամսաթիվ)
<u>Արթուր Մելիքյան</u> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>20.11.08թ.</u> (ամսաթիվ)
<u>Գարիկ Ադամյան</u> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>20.11.08թ.</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<u>Աշոտ Օսիպյան</u> (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>20.11.08թ.</u> (ամսաթիվ)
--	---	--	--------------------------------

20 նոյեմբերի 2008 թ.

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 375002, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

11 նոյեմբերի 2008թ.

ՔԱՂՎԱՑՔ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 37/01  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԽՈՐՀՐԴԻ

Գայանե Մարգարյանին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ  
ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր  
պաշտոնակատար նշանակելու մասին:

Քնարկելով գործադիր տնօրեն Ա.Օսիպյանի առաջարկը՝ Գայանե Մարգարյանին  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար  
նշանակելու մասին.

Խորհուրդը որոշեց՝

1. 2008 թվականի նոյեմբերի 11-ից Գայանե Մարգարյանին նշանակել  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր  
պաշտոնակատար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Բ.Բեգլարյան

Իսկականի հետ գրչա  
Աշխատակազմի գլխավոր



Մ.Ուզունյան

Արձանագրություն  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի թիվ 02 արտահերթ ընդհանուր ժողովի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին բոլոր 804300 բաժնետոմսերի սեփականատերերից մասնակցել են (ուղղարկված քվեաթերթիկները վերադարձրել են) թվով 795522 հատ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող անձինք, որը կազմում է ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետեմսերի 98,9 %-ը:

Զվորումն ապահովված է ժողովը համարվում է կայացած:

Ժողովն անցկացվել է (վերադարձված քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներն ամփոփվել են) ք. Երևան, Պուշկինի 19 հասցեում 2008 թվականի հոկտեմբերի 17-ին:

Ժողովի Նախագահ Բարսեղ Բեգլարյան  
Ժողովի քարտուղար Մարիետտա Ուզունյան  
Ժողովն անցկացվել է հետևյալ օրակարգով.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում, լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկում:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ շողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ ամբողջությամբ նախապես հայտնի գնորդ Եվրոպական Վերակառուցման և Չարգացման Բանկին տեղաբաշխելու մասին:

3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց վճարման մասին:

Օրակարգի առաջին հարց - Կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակիցների 99,9998 տոկոսը կամ 795520 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա և ձեռնպահ 0,0002 տոկոսը կամ 2 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով ժողովը որոշել է.

1. Ավելացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը 1340505000 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասուն միլիոն հինգ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամով՝ այն սահմանելով 5362005000 (հինգ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հազար) ՀՀ դրամ և այդ նպատակով լրացուցիչ թողարկել թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, 5000 ՀՀ դրամ անվանական աժեթով, հասարակ անվանական բաժնետոմս:

Օրակարգի երկրորդ հարց - ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերը չեն օգտվել իրենց նախապատվության իրավունքից:

Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկին տեղաբաշխելուն կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998 տոկոսը կամ 795509 բաժնետոմսի սեփականատերեր, դեմ չկա և ձեռնպահ 0,002 տոկոսը կամ 13 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

2. Լրացուցիչ թողարկվող թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի , 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ ամբողջությամբ 1 բաժնետոմսը՝ 7601 ՀՀ դրամ արժեքով տեղաբաշխել նախապես հայտնի գնորդ Եվրոպական Վերակառուցման և Ջարգացման Բանկին:

Օրակարգի երրորդ հարց - Կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998 տոկոսը կամ 795504 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա և ձեռնպահ 0,002 տոկոսը կամ 18 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

3. Լրացուցիչ թողարկվող թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա 2037835701 ՀՀ դրամ գումարը ենթակա է վճարման մինչև 2008 թվականի նոյեմբերի 29-ը:

Ժողովի Նախագահ



Բարսեղ Բեգլարյան

Ժողովի քարտուղար

Մարիետտա Ուզունյան

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կապիտալում Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի մասնակցության պայմանների վերաբերյալ

Առաջնորդվելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի հետագա զարգացման ապահովման, կանոնադրական կապիտալի ավելացման, ինչպես նաև հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման և համաշխարհային լավագույն փորձին համապատասխանեցման անհրաժեշտությամբ, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի նշանակալից բաժնետիրոջ՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի, պրն. Բարսեղ Բեգլարյանի, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի միջև սույն թվականի հոկտեմբերի 29-ին կնքվեցին Տեղաբաշխման և Բաժնետիրական համաձայնագրերը, որոնց համաձայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից թողարկված 268,101 բաժնետոմսերը (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալի 25% գումարած մեկ բաժնետոմս) փակ տեղաբաշխմամբ վաճառվեցին Եվրոպական և Ջարգացման Եվրոպական Բանկին:

Վերոհիշյալ գործարքի վերաբերյալ ս/թ նոյեմբերի 12-ին տրամադրվեց ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը: Միաժամանական ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ս/թ նոյեմբերի 18-ի թիվ 121-Ա որոշմամբ թույլատրեց Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի վերոհիշյալ համակենտրոնացումը: Համաձայն նշված Համաձայնագրերի դրույթների, դրանք ուժի մեջ են մտնում բոլոր համաձայնություններն ու թույլտվություններն ստանալու պահից՝ այսինքն Համաձայնագրերն ուժի մեջ կմտնեն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 18.11.2008թ. թիվ 121-Ա որոշումը ստանալու պահից:

Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի այս ներդրումը զուգորդվելու է նաև Բանկի կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակությամբ, որի շրջանակներում իրականացվելու է հնստիտուցիոնալ զարգացման ծրագիր և հզորացվելու է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի կորպորատիվ կառավարման համակարգը, բարձրանալու է ռազմավարության և հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման արդյունավետությունը, իրականացվելու են միջոցառումներ՝ ուղղված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ընթացիք գործունեությանն առնչվող բոլոր ստորաբաժանումների ինստիտուցիոնալ կարողությունների և աշխատակիցների մասնագիտական ունակությունների շարունակական զարգացմանը:

Համաձայնագրերերով սահմանվում է նաև, որ Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկն իրավունք է ձեռք բերում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի էտրիդում որպես անդամ նշանակել իր կողմից առաջարկված թեկնածուին:

Համաձայնագրերով մանրամասնորեն ներկայացվում են նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կապիտալից Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի դուրս գալու գործընթացի սկզբունքները և պայմանները, ինչպես նաև IPO-ի կամ ռազմավարական վաճառքի (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալի առնվազն 50%+1 բաժնետոմսերի վաճառք) դեպքում իրականացման ենթակա քայլերը:

Նախատեսվում է նաև, որ Եթե Համաձայնագրերի ստորագրման երրորդ տարելիցից հետո Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկը ցանկանա վաճառելու իր բաժնետոմսերը և ստանա առաջարկ իր սեփականություն համարվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերից ավելի բաժնետոմսերի համար, ապա նա պետք է ծանուցի դրա մասին նշանակալից բաժնետիրոջը: Ստանալով նշված ծանուցումը, նշանակալից բաժնետերը պետք է 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում օգտագործի իր առաջնային գնման իրավունքը և ձեռք բերի Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի սեփականություն հանդիսացող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերը՝ հավանական գնորդի կողմից առաջարկված պայմաններով և գնով կամ վաճառի (առանձին կամ համատեղ) անհրաժեշտ քանակությամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսեր, որպեսզի Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի բոլոր բաժնետոմսերի և նշանակալից բաժնետիրոջ վաճառքի ենթակա բաժնետոմսերի ընդհանուր քանակը համապատասխանի գնորդի կողմից պահանջվող քանակին:

Ներկայացված են նաև Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի նշանակալից և այլ բաժնետերերի կողմից իր բաժնետոմսերի հնարավոր վաճառքի իրականացման նախապայմանները և մանրամասները, ինչպես նաև վաճառքի դեպքում Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի իրավունքները: Մասնավորապես նախատեսվում է, որ Եթե Համաձայնագրերը ստորագրելուց հետո ցանկացած պահին նշանակալից բաժնետերը ցանկություն ունենա վաճառելու իր բոլոր կամ մի մաս բաժնետոմսերը, ապա նա պետք է ամնիջապես ծանուցի դրա մասին Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկին՝ առաջարկելով մասնակցել գործարքին: Ընդ որում, Եվրոպական Բանկը ունենալու է վաճառքի առաջնահերթության իրավունք նշանակալից բաժնետիրոջ առջև:

Միաժամանակ Բաժնետիրական համաձայնագրով հստակ սահմանված հատուկ իրավիճակների կամ դեպքերի առաջացման պահին Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկն իրավունք է ունենում չեղյալ համարել իր պարտավորությունները և վաճառել իր բաժնետոմսերը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի նշանակալից բաժնետիրոջը Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի կողմից առաջարկված կամ հատուկ իրավիճակում փորձագետի կողմից որոշված գնով:

Ընդ որում, վերոհիշյալ դեպքերի առաջացման պայմաններում, ՎՋԵԲ-ն իրավունք է ձեռք բերում պարտադրել Բաժնետիրոջը՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին, գնել ՎՋԵԲ-ի սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը նվազագույն գնով կամ Արդար Շուկայական Արժեքով, որը ենթակա է հաշվարկման հատուկ այդ նպատակով ներգրավված խորհրդատուի կողմից: